

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

(Շար. տե'ս Բազմ. 1954. Թիւ 6-7, էջ 186-196)

ՄԱՀՈՒԱՆ ԵՐԳԵՐ. - ԿԵԱՆՔԻ ԸՄԲՈՒՆՈՒՄԸ ԵՒ ՆԻԹԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԲԱՆԱՍՏԵՂ-
ԾՈՒԹԵԱՆՅ ՄԷՋ: ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ:

Մահերգութիւնը չորրորդ ու վերջին լարն է Եղիայի քնարին, եւ որ շատ կանոնէն, սկսեալ 1884 թուականէն (թուական նաեւ իր բանաստեղծութեան սկզբնաւորութեան), ամէնէն ուժղին մտասեւեռումը, հոգեկան տանջանքը եղած է բանաստեղծին համար: Մահը իր դէմն է, ոչ միշտ սարսուռով, սպառնալիքով լի, ոչ միշտ ահաբեկիչ՝ այլ մանաւանդ թէ ազատեցուցիչի դեր կատարող՝ հսկայ եւ անխտիր իրականութիւն մը: Իր քնարերգականները, եղերերգականները մահուն պատկերներով հարուստ են: Մա՞հ քէ կեան (Գր. եւ Իմաստ. Շարժ. 1884. 128) սիրուն երգը, օրինակի համար, անուղղակի մահուն երկիւղը ունի որպէս խորք. Վարդն (անդ. 1886. 124) նոյնպէս բոյրի, փթթումի գեղեցկութիւններուն մէջ կը յիշեցնէ իրեն յետին վարդը, զոր իր բարեկամը պիտի ձօնէ արցունքով ցօղումը:

այլ յորժամ
Փակուին աչք իմ վարդից,
աստեղց լուսատուք,
Յորժամ հիւծիմ, ի հող
մտնեմ տարածամ,
Պիտի ձօնեն ինձ վարդ
ցօղեա՛լ արտասուք:

Կտակը (անդ. 1884. 167) Պ. Դուրեանի «Իմ Մահը» երգին պէս բան մը, սրտաճմլիկ հառաչ մը, ուղղութեամբ իր հօրաքեռորդուն՝ Գալուստ Պէյլիկճեանին: Ահա այդ երգը ամբողջապէս, մանաւանդ որ

մոռցուած է «Հայ Գրագէտներու Բարեկամներ» Մատենաշարի վերջին հրատարակութեան մէջ:

Երբ մեռանիմ, ո՛վ իմ Գալուստ,
Եւ՝ համադրեստ գերեզմանին՝
Գան ինձ փայտեայ ձեւել հազուստ,
Անծալք հանդոյն անշունչ մարմին.
Ա՛հ, մի՛ թողուր. Հայրդ անդադադ
Յալուց ի խորս հանգչի խաղաղ.

Երբ մեռանիմ, ո՛վ իմ Գալուստ,
Եւ մահիճիս շուրջ լուցանեն
Ձիգ ջահս յետուստ եւ յառաջուստ,
Որք համր ըղմահ ծանուցանեն.
Ա՛հ, մի՛ թողուր. Ի մըթան հօրդ՝
Աստեղք եղան ջահք լուսայորդ:

Երբ մեռանիմ, ո՛վ իմ Գալուստ,
Եւ խաչափայտ, բուրմառ, սաղմոս,
Պարառեն դիակն իմ յամենուստ,
Եւ դամբանին թընդայ սուրբ խօս,
Ա՛հ, մի՛ թողուր. Քու՛մ հօրդ քարոզ
Իւր մահն եղաւ, հողմունք՝ սաղմոս:

Երբ մեռանիմ, ո՛վ իմ Գալուստ,
Եւ մարմնեկիս յուղարկաւոր
Գան բարեկամքն իմ անփախուստ,
Կորագըլուխ, արտասուածո՛ր.
Ա՛հ, մի՛ թողուր. Յիւր վերջին կայք
Ընկերացան հօր քում՝ ջուրց պայք:

Երբ մեռանիմ, ո՛վ իմ Գալուստ,
Եւ դան խուզել դըրադարանս,

Ուր կեցցէ յար սիրտն իմ հարուստ
Ի սիրահուր յանտիպ մատեանս.
Ա՛հ, մի՛ թողուր. Թուղթք իմ յարդ-
[ուի՛ն,
Որպէս կըտակ սուրբ հօր քոյին:

Մահուն ողբերգ մ'է զգայուն, արգիւնք յուզումի՝ Հիւժեալ աղջիկն (անդ. 1884. 194), ուր Եղիա անողոր հիւանդութեան զոհ մը կ'երգէ, եւ այդ այնքան աւելի ողբալի՝ որքան անհետացողը՝ քրն-

քուշ, փափկիկ էակ մըն է, կեանքին հաղիւ բացուած կողմնի թարմութիւն մը, ծիրանի արշալոյս մը, որ յանկարծ կը չքանայ...: Այս եղերերգութեան որպէս գաղափար՝ անոր առաջին տուները գուցէ բաւէին, բայց այս քերթուածն եւս վրիպած ըլլալով Եղիայի գործերուն վերջին հրատարակութեան «Հ. Գ. Բ. Մատենաշար»ին մէջ, հայ երիտասարդութեան մօտէն ծանօթացնելու համար՝ կու տանք զայն եւս հոս:

Հէ՛գ գեղեցիկ աղջիկ... Տերեւք անկանի՛ն...
Յերիկամունդ յածին ըստուերք դամբանին.
Նիրհդ է խռով յո՛յժ, եւ իբր երա՛զ մ'արթնութիւնդ.
Մէն մի ճաճանչ արփուոյն ըմպէ վա՛րդ արիւնդ...:

Անտեսն այն ձեռք, զոր մարմնոյդ վրայ ցանդ ըղգաս,
Ջե՛րմ է թէ ցուրտ, թեթե՛ւ է թէ ծանր... ո՛հ, լաս.
Ժանտ ախտն այրէ, սառուցանէ դքո՛ւ ճակատ.
Մահուա՛ն ըղգաս ձեռքն, եւ մերժե՛ս դու զգեղհատ:

Յառին առ դուրս աչքդ, ահանջդ է հաւնոցին.
Յարեան վառեակդդ, ըղբեզ կոչեն անձկադին.
Եւ դու կոչե՛ս փրկութեան քաղցր ըզհրչտակ...
Ի զո՛ւր, հէ՛գ կոյս, ի քոյդ բախեն ոչ դըռնակ:

Սակայն յաճախ տեսնես հրեշտակս հոյլ ի հոյլ,
Եւ քեզ թըւի քերովբէից լինել քոյր.
Դողան ո՛չ եւս ծունգք քո, ճայնդ ո՛չ եւս աղօտ.
Թոչիս, պարես, երգես, շողա՛ս գերդ աւօտ:

Խիստ հաղն, աւա՛ղ, տենդն ու բրժիշկ, ընտանիք
Ձքեզ ի լուսոյն յարկացն ամեն խանութ յերդիք.
Հաղա՛ս, ցընցուի մարմինդ, հողիդ նըւաղի,
Եւ քո բերան զարտօսը ըմպէ դառնաղի:

Ընտանի՛ք... ո՛հ, ընդ միշտ թողին զքեզ՝ մանուկ՝
Հայրդ ու մայրիկ. վաղ մընացիր որբ, եղո՛ւկ.
Բարեդորով, այլ ծեր ամուլ մ'անորդեակ
Ձքեզ որդեգրեց. վարձքն իւր՝ քո գէմք անուշակ:

Ա՛յդ ընտանիքդ. - Ամուլ ամօք. Ո՛չ դիրկ մօր,
Ո՛չ ճակատուդ վրայ ջերմ համրոյր խարտեաչ հօր,

Վարդապետը թիթ ո'չ ալ տք եղբոր, քեռ սիրուն.
Այլ սեւ խորշոմք եւ հերք ճերմակ. ի՞նչ դարուն:

Այսպէս անցաւ դարուն կենացդ, հէ՛ղ աղջիկ.
Երկու ծերոց մէջ ձիւնահեր, անծաղիկ.
Հաւերդ էին բոլոր հրճուանքդ — եւ երկու
Բանաստեղծք որք, մեղամաղձոտ, ողբերգո՛ւ...

Մինչ դու հաւուցդ, երկնի թռչնոցն հայէիր,
Ակնարկէին առ քեզ նոքա սիրալիր.
Երգ մ'էր թռչնոյ՝ խօսակցութիւնդ, եւ երկնի
Պատառ մ'էին ժպտուն աչկունք քո ծաւի:

Հէ՛ղ զեղեցիկ աղջիկ, հաղա՛ս, տոչորի՛ս.
Քայլս՝ օրն ողջոյն՝ առնուս հաղիւ դու չորիս:
Փայլելին կայակք քրտանց յամբիծ քո ճակատ.
Ո՛ւր թաքչէին նախ մարդարիտքդ այդ առա՛տ...:

Մարդարի՛տք. ա՛հ, մահու քրտունք են դոքայ.
Հասա՛ւ աչուն, տերեւն ոստին վրայ քա՛յ(1).
Արեւն է զաղջ, զովանան օդք, հովուն ձայն
Եղբեր՛րդ մ'է. — բացուին փոսք նեղ, խոր, երկա՛յն:

Դարձի՛ր, Աշո՛ւնդ, յետս. եւ դու, Մա՛հ, հեռացի՛ր.
Նոր կեանք կուսին տո՛ւր, ո՛ր Գարուն շնորհաճիր.
Ծերոց նեցուկն է, պահապանն հաւերուն,
Մանկանց հրեշտակն, եւ սրտակիցն որբերուն:

Մանկունք եթէ չէին յիւրում տխրիկ տան,
Անձկաւ կուտանն երթայր խնդրել հեռաստան
Մատաղ մանկունս, ոյց մերթ շաքար, միշտ համբոյր
Բաշխէր, ի վարձ ընդունելով ծաղկանց բո՛յր:

Այլ քան զըւարթ մանկտին նա դորքս հարցանէր.
Ձորք աղջկունս, դորք պատանիս, դորս հանէր
Անոյճ ժպտովն ի մոռյլ վրէժն թախծութեան.
Եւ զմեկ յորբունս սիրէր հիւծեալն յաւիտեա՛ն...

Ձօհան եւ զիս... Վա՛հ, զեղեցիկ հէ՛ղ աղջիկ...
Վա՛հ, փրկութեանդ, բըժըշկութեանդ հընար չի՛ք...

(1) քա՛յ. հաւանաբար տպագրական սխալ մը. ըլլալու է տըֆա՛յ, այսինքն հաղիւ կը չնչէ:

Վա՛հ, բոլոր հատք, բոլոր կաթիլք, բոլոր բոյսք,
Բոլոր խընամք, բոլոր մաղթանք, բոլոր յոյսք,

Պիտ՝ ի դերե՞ւ ելնեն... Յանկում տերեւոց՝
Անձուկ, երկայն ու խորունկ փոսն հիւծելոց
Պիտի բացուի՞ քեզ համար ալ, հէ՛ղ աղջիկ,
Հէ՛ղ զեղեցիկ, սիրատենչի՛կ, սո՛ւրբ աղջիկ...:

Ջերմութիւնը զգացումին, բուռն թափը՝ որով կը յորդին իր զաղափարները, խոնաւ արցունքի տարափին տակ որ կը հոսին իր բանաստեղծի երկնքէն, իր ողբը եւ լացը՝ որ հուսկ կը նուաղի ի տես անդամանելի հիւծախտին դորձած աւերին, բեմադրական ձեւով մը արտայայտուած են հոս: Այդ զեղեցիկ, բարի եւ ազնուական հոգի մը կրող աղջիկը, որք իրեննեւրէն եւ որդեգրուած հարուստ ու գործովոտ ամուլէ մը, դուցէ՛ ազգականական ազդեցով մը իրեն հետ կապուած (չկայ հոն ատոր հաստատութեան ոչ մէկ յայտնի ապացոյց, բացի յիշատակումէն բանաստեղծի մը, Օհանին՝ անշուշտ Յովհաննէս Սեթեանը՝ որ ազգական է Եղիային), շարժիչն ու ոգին է այդ զգացումը բանաստեղծութեան: Քերթուածը շարժուն, ողբերգական նկարագրութիւն մըն է այն պայքարին՝ որ կ'անցնի ընդմէջ հիւծած աղջկան եւ անողորմ մահուան. անոր ապրումները, հեւքերը, հոգիի ու մարմնի բարեմասնութիւնները պատկեր առ պատկեր դրուած են հոն. իր զեղեցիկ ու թարմ երիտասարդութիւնը, իր դարունը հակադրուած՝ զինքը որդեգրող ծերերու անծաղիկ ձմրան հետ, իր հրճուանքները, իր նախասիրութիւնները, թռչունները, մանուկները, որբերը, եւ այդ բոլորը որ յանկարծ իրեն հետ միասին կ'անհետին՝ կը կազմեն շրջանակը նկարագրուած կեանքին: Աշունի պատկերին մէջ դրուած այս տխուր տեսարանը՝ քերթուածին դոյն, ինքնութիւն տուող բան մը ունի, վասնզի գոսացած տերեւ մըն է նաեւ այդ հէ՛ղ աղջիկը: Այս տրտում՝ եւ Եղիայի

համար ճակատագրական վերջով, որ իր հոգեկան ապրումներուն եւ արտայայտութիւններուն յատկանշական է, կը փակուի քերթուածը: Իր այդ «Պիտի բացուի՞ քեզ համար ալ» (փոսը դամբանին), դանդաղը՝ ցաւին յետին բողոքի ձայնն է, որպէս թէ ըսած ըլլար. դուն որ զեղեցիկութիւնն էիր, բարութիւնն էիր, դո՛ւն ալ կ'երթաս ուրեմն որս ըլլալու յաւերժական թշնամիին:

Որպէս զգացում եւ պատկերացում հոգեկան ապրումի մը՝ Եղիայի կարեւոր էջերէն մէկն է այս Հիւծեալ աղջիկը, ուր կիրք, ջիղ եւ շարժում, պատկերաւոր ըսելու կերպեր, եւ փոխաբերական յանկարծական մերձեցումներ՝ երանդ ու զեղեցիկութիւն կու տան անոր: Կուռ խտացումներու ձգտումը՝ որ իր ոճին սովորական գիծն է քերթուածներուն մէջ, հոս ալ մէկ կողմէն յատկութիւն մը կրնայ նկատուիլ, միւս կողմէն դուցէ՛ թերութիւն, լայն եւ յորդադեղ ընդլայնումի պակաս մը զգացնելով, ըստ նիւթին պահանջին:

1885-ին երկաթուղիի գծին վրայ իր վիզը երկարող եւ ահաւոր մահով կեանքին վերջ տուող՝ գրաշար Հունկի մահը ցնցող գեր մը կատարած է Եղիայի հոգւոյն վրայ. երեք երգեր ինքնաբերաբար բխած են իրմէ. 1885-ին (Երկրագունտ, 1888. 141), յետոյ տարիներ վերջ դառնալով նոյն նիւթին՝ կու տայ (Մասիս շարաթաթերթին մէջ 1892, 28. 1893, 101) երկու ուրիշ երգեր ալ, պոռոզ աւելի մտածութեան քան զգացումի:

Մահուան պատկերը, սպառնալիքը՝ Ե-

Մահուան երգերէն ամէնէն անձնակա-
նը, ամէնէն մօտիկը Եղիայի հոգւոյն
արտառոցութեան՝ եւ իմ շիրմիս վրայն
է (Թէոդէիկ. «Ամէնուն Տարեցոյցը», 1915.
144): Հնչեակ մըն է ան: Եղիա կ'երեւա-
կայէ ինքզինքը արդէն մեռած, եւ իր պա-
տանքը թօթափելով՝ օր մը կանգնած իր

շիրմին վրայ: Գրած է 1907-ին, իր տա-
րաբախտ ապրումներուն բուռն շրջանին,
լքուած, մեկուսի, ինքնակեղծոնացած,
կամաւոր բանտարկեալ մը իր տան դերեղ-
մանական լուծեան եւ միայնութեան
մէջ:

Տո՛ւր ինձ, ո՛ր Տէր, որ ցայլ մ'երևնա՜ շիրմէս դուրս,
Որորանէս ուր ա՛յնքան դոյզն դիեցի,
Սրսկապանէս ուր ցուրտ ըստուերս սեղմեցի,
Վըսեմագոյն վայրն այցեմ, աչք յարտասո՛ւս:

Ուռնեւոյն զոյգ՝ տապանաքարս — մարմար կոյս —
Թեւերուն մէջ գրկե՛մ՝ հանդէտ լոյս դանձի,
Եւ իմաստիւք մըթին, տառիւք դեղոսկի
Տապանադիրս ընթեռնո՛ւմ, աչք յարտասո՛ւս:

Եւ զի չունիմ մայր որ շիրմիս վրայ դայ լալ,
— Քանզի մայր մը կրնայ անկեղծ լալ, —
Կուշտ մ'արտասուեմ ընդվա՛յր անցած կեանքիս վրայ,

Սիրտըս պարապ՝ ուր պարտէր սէրն, ո՛հ, լողալ,
Լեցընեմ զայն դառն արտասուօքս հըրահա՛ւ:
— Միակ ապրած օրս ա՛յդ, եղո՛ւկ, երկրի վրայ:

Այս բանաստեղծութեան ներշնչումը
խկապէս համապատասխան է Եղիայի
հոգեկան դիւրադրած եւ գերզգայուն յու-
զումներուն, խռովումներուն. սակայն կար-
ծէք կ'երթայ նոյնանալ Մկրտիչ Պէշիկ-
թաշեանի վերջին իղծին արտայայտու-
թեան հետ, Մերձ ի մահ գրուած եղե-
րեղութեան մէջ, երբ ազնուախոհ բանա-
ստեղծը նրբութեամբ մը՝ որ իրեն յատուկ
է, իր սիրականին կ'ուղղէ յետին գանդա-
տը. Դու չսիրեցիր զիս. տես հիմա մահը

ինչքան գեղեցկացուց զիս, շիրմէն ան-
դին ալ պիտի ատե՞ս զիս: Ու բանաստեղ-
ծը կ'արձակէ իր սրտին այս սրտակեղեք
կոչը ու գանդատը նստած իր շիրմին վը-
րայ: Տէմիրճիպաշեան ծանօթ էր Պէշիկ-
թաշեանի եղբերգութեան, եւ գուցէ այս
երկուքին միջեւ կայ փոխանցում մը նոյն
զգացումներու արտայայտութեան գրեթէ
համանման եղանակին, կամ գէթ ընդհա-
նուր գաղափարին: Պէշիկթաշեան կ'եր-
գէ.

Եւ երբ հողմըն մեռելոց զայցէ դաճինն իմ խլրտել,
Ըսպիտակն իմ ճակատ ճրճեռնական մըրկաց ի մոռնչ
Ի բաց զպատանսն արասցէ, եւ բազմելով շիրմիս վրայ՝
«Ե՛կ, գոչեցից առ նա, ե՛կ, չեմ նոյն յորմէ խորչէիր դու.
Տե՛ս զիս՝ զգեղեցկացոյց զիս մահ, արար զիս տարփելի.
Միթէ դարձեալ ատիցե՞ս զիս եւ անդրագոյն քան ըզշիրիմ»...

Մտքի բանգազուշանք մը անշուշտ աս
ալ, ինչպէս Եղիայինը, սակայն չունի ա-
նոր խիղախ, զօրաւոր եւ խենթ զգայնու-
թիւնը: Արտակարգ արտայայտութիւն մ'է
եւ արտակարգօրէն ալ խենթ գեղեցկու-
թիւն մ'ունի Եղիայինը, իր պատկերնե-
րուն ուժեղ եւ ցնցիչ գոյներով:

* * *

Եղիա կեանքին կը մօտենայ ծայրայեղ
յոռետեսութեամբ: Կեանքը բարիք մը չէ
իրեն համար, այլ տառապանքի սկիզբ մը,
որ մարդուն համար կը բանայ անվերջ
ցաւերու աշխարհը: Մարմինը չարագոյն
աղբիւրն ու դորձարանն է շարունակական
տարաբախտ ապրումներու, մինչեւ որ
կեանքը լուծուի՝ յեղաշրջումով մը բնու-
թեան տարբերուն մէջ: Բնութեան եւ
մարդուն միջեւ կայ հաղորդականութիւն
մը, ըստ իրեն, իրրեւ ամբողջութեան եւ
մասերու, համայնաստուածութեան ըմ-
բռնումի համաձայն, որով ամէն ինչ մէկ
է, պատճառն արդիւնքին հետ շփոթուած՝
ինչպէս կեանքը վախճանին հետ, միացած
տիեզերական ընդհանուր շարժումին, որ
կը կոչուի կեանք, բնութիւն, Աստուած
իր երբեակ մեծ յայտնութիւններուն մէջ:

Հոգեկան սկզբունքի յայտնի ուրացում
մը ունին իր կարգ մը երգերը, որոնցմէ
արդէն յիշատակեցինք նախապէս Անգեղն
Երգ զոյգ քերթուածները, ուր նիւթին
յարումի իր վարդապետութիւնը յայտնի
էր: Հոս պիտի փորձենք քննել այն բանա-

ստեղծութիւնները՝ որ պաշտօնապէս կը
կրեն իրենց վրայ համայնական նիւթին
վարդապետութեան աղետալի դրոշմը:
Արդեօք իրապէս ուրացո՞ւմ մը հոգիի, թէ
իմաստասիրական ճիշդ մը հասցուցած են
զինքը այս հետեւանքներուն, անկարելի է
ստուգապէս վճռել. արդեօք բանաստեղ-
ծական խո՞րք մը դնելու ջանքը, թէ իր
անկեղծ համոզումը կը կազմեն այն պատ-
կերները՝ որ նիւթի յեղաշրջումին փառա-
բանութիւնը կ'ընեն, դժուար է ճշտել,
քանի որ ան տեղ տեղ նոյնիսկ կը հակասէ
ինքնիրեն: Շատ հաւանաբար անհաւա-
սարակչիւ մտքի տարտամութիւնները,
նորութեան սէրը, յաւակնոտութիւնները
գիտունի եւ փիլիսոփայի, առած տարած
են զինքը այդ եզրակացութիւններուն:
Բայց այս խնդրին պիտի մօտենանք աւելի
մանրամասնօրէն, երբ քննութեան առնենք
իր իմաստասիրութեան աղբիւրները եւ
հիմքերը:

Թորոս Պէշ Ագնաւուր-ի մահուան առի-
թով գրած իմաստասիրական Եղերգը
(լաւագոյն էր ըսել Եղերեղը), ունի ար-
դէն «Ոչինչ ստեղծանի, ոչինչ եղծանի»
բնաբանը՝ որ կ'ամփոփէ իր տեսակէտը
նիւթին յեղաշրջումի վարդապետութեան:
Երեք մասով հրատարակուած (Գր. եւ
Իմաստ. Շարժում. 1885, 195, 209. 1886,
11) այդ եղերեղին սա տունները, օրի-
նակի համար, բացայայտ կերպով կու
տան իր միտքը.

Ա՛հ, քարին տակ, հողոց թանձր կուտից տակ,
Որդանցն անտես ընդ ատամամբք սըրածայր,
Եւ ընդ ոտիւք բի՛ւր անցորդաց անգիտակ,
Վերածուէ՛ին մեր սիրելիք. մահ ցնծա՛յր: —

Մահ... Այլ ո՞վ է. չիք մահ, չիք կեանք, չի՛ք Աստուած.
Կամ մանաւանդ զհամայն Աստուած փոխէ յար.
Էիր հիւլէ, եղեր մարդ, այժմ ես գանդուած
Գորշ ու տըգեղ, տրտմատեսիլ, որդնահար:

Այլ մարմնեկիդ մասունք ցրուեալ ի տիեզերս,
Կեան ի յերկրի, յայերս անգայտ, հո՛ւր յերկինս.
Եւ մեք ի զո՛ւր դամբարանին ցուրտ յեզերս
Լամք ի մեր գիրկս ըզքեզ կոչեալ ողբադի՛նս:

Հիւլէական դպրոցին վարդապետութիւնը չէ՞ սա միթէ: Նիւթը տիրական, նիւթին վերածում՝ հողի արտայայտութեանց բոլոր երեւոյթներուն, կեանքին, սիրոյ, ծիծաղին: Եթէ չկայ մահ, չկայ եւ ծնունդ, այլ լոկ յեղաշրջում յաւիտեանական նիւթին՝ որ միայն տարազը կը փոխէ ժամանակին մէջ եւ զանազան էակներու ձեւին տակ կը յայտնուի, յետոյ վերստին դառնալու համար բազկացուցիչ տարրերուն: Ու այդ փոփոխութիւնը կատարողը, շրջողը կը համարի թէ ըլլայ Աստուած: Յաջորդ տունները աւելի կը հաստատեն ըսուածը.

Վա՛հ Թորոս Պէյ... — Սակայն ա՛յս է կեանք մարդոյն,
Հա՛րկ է ծընիլ, հա՛րկ է շնչել, աճիլ, տալ
Տարերս օդոյն, առնուլ յօդոյն հիւթ կամ թոյն.
Հա՛րկ է խոկալ, սիրել, հսկել, հաւատալ:

Հա՛րկ է, նաեւ ի ժամու կամ տարածամ,
Մտիլ արեան, սպառիլ շնչոյն, մեռանի՛լ...
Այլ, ո՛չ, չիք մահ. էաք եւ եմք յարածամ,
Մարդն՝ յետ մահուն՝ տարածանի գերդ սուրբ Նիլ:

Մի՛ լար, ո՛ր մայր. դադրին արտառաք, հէզ դու հայր.
Առ ձեզ, ի ձեզ կեայ յաւիտեան ձեր որդեակ.
Թորոս մասնիկ մի՛. սա շողին՝ որ ի մայր
Մտնող արփուցն վարսն է գոգցես վերելեակ,

Սա կոհակին, սա տաղին մէջ, Թորոսէն
Բան միանկորոյս կայ նրւագուն եւ վաղուն.
Արտասուացէ հետ, ո՛ր հայր, որդւոյդ քիրտք հոսեն.
Ո՛ր մայր... ո՛ր մայր... Ա՛հ, լեզուս է կակաղուն:

Եղիայի խորհրդածութիւնները եւ իմաստասիրական հետեւութիւնները ի վերջոյ չեն ժխտեր Աստուծոյ գաղափարը, որ կայ գուցէ չփոթ ձեւով մը, համայնաստուածեան ըմբռնումով եւ ոչ թէ բացարձակ, գերագոյն եւ անձնական էակի մը: Կը ժխտէ սակայն բացարձակապէս մահը. մահը գոյութիւն չունի, մեռնիլը ոչնչանալ մը չէ, այլ փոխուիլ մը միայն. որովհետեւ կ'ըսէ ան՝ Էաբ եւ եմք յարածամ: Բայց ի՞նչպէս. վերածուած բնութեան տարրերուն, բոյրին, շողին,

ճառագայթին, եւ այն բոլոր գեղեցիկ տարրերուն՝ որոնք հողի մը նրբութեամբ կրնան մտածուիլ. իսկ մարմինը փոշի, եւ ամէն ինչ որ մարմնական է՝ դատապարտուած է ըլլալու կերակուր որդերու: Հարցը՝ մարմինն շուրջ չէ, այլ հողիին՝ որուն գոյութիւնը յետ մահուան՝ ժխտուած է որպէս անձնական, իմացական կարողութիւններով օժտուած էակի մը: Այս տխուր հետեւութիւնը ակն յայտնի է Եղիայի քով:

Իր այս տողերը գրուած ի մխիթարու-

թիւն սգաւոր մօր մը եւ հօր մը, որ իրենց սիրասուն որդւոյն՝ Թորոսի մահով ընկճուած էին, ոչ թէ սփոփանք, այլ դայ-րոյթ կը պատճառեն: Եղիա կը նախգգայ

այդ բանը, եւ թերեւս արձագանգ ըլլալու համար տառապեալ մօրը բողբոջին՝ կը գրէ նոյն քերթուածին Բ. մասին վերջին տան մէջ.

Ա՛հ, մօր մը սէրն. ա՛հ, մօր մը վիշտն... Ընդ վայր են
Որդեկորոյս մօր մ'ողղեալ բանք սըրտահանք.
Ընդ վայր՝ կենաց պարզես խորհուրդն. «Անօրէն»
Գոչէ մայրն. «Օ՞դ, ջո՞ւր» է զաւակս... Հայհոյանք...:

Եղիայի բացատրութիւնը դոհացուցիչ չէ արդարեւ. քրիստոնեայ մայր մը՝ որ ունի հողի անմահութեան հաւատքը, կ'ընդվզի լսելով կեանքի խորհուրդին մեկնութիւն մը՝ ուր կը ժխտուի հողին անհատական, անմահական գոյութիւնը բաժնուէլէն վերջ մարմինէն: Գր. Օտեանի յանդիմանութիւնը ծանօթ է. հողեպաշտ մեծ քաղաքագէտը կ'անդրադարձընէր Եղիային՝ թէ ի՞նչպէս յանդգնած էր որդեկորոյս մայր մը մխիթարել, դիմացը դնելով այնպիսի վարդապետութիւն մը՝ որ յուսահատութեան կ'առաջնորդէր, մերժելով հանդերձեալ կեանքի մը ակնկալ-

ութիւնները, յոյսն ու հաւատքը: Այդ վարդապետութիւնը, կ'ըսէր Օտեան, քուկդ չէ. դուրսէն եկած է. Լիթրէէն, Տարուինէն, Հեքէէն, Պիւնիէն, Սփէնսերէն...:

Բանաստեղծը իր այս քերթուածին Գ. մասին սկիզբը, առանց սակայն հրաժարելու իր վարդապետութենէն, կը համոզուի թէ անկարելի է ակնկալել ծնողք մը այնպէս՝ ինչպէս ինքը կը կարծէր, կորսուած զաւակի մը սիրելի ներկայութիւնը տեսնել տալով օդին, ջուրին կամ ծաղկին մէջ.

Արդ լո՛ւտ, քընա՛ր: Թո՛ղ որ օրէնք կատարուին.
Թո՛ղ արտասուել մայրն, եւ ըզհայր թո՛ղ ողբալ:
Թո՛ղ Լուկրէտն այժմ, Եպիկուրոսն ու Տարուին.
Ե՛ւ դու հեծէ. հեծեծէր ո՞չ վեհն Յոր ալ:

Ահաւասիկ հիմերը իր վարդապետութեան, հաղորդուած մեղի իր իսկ գրչէն:

Մխիթարութեան ուրիշ քերթուած մըն է Բան եւ Աստուած (Գր. եւ Իմաստ. շարժ. 1886. 38), ուր նիւթին փիլիսոփայութիւնն է որ կը կաղմէ դարձեալ խորքը: Բանը մարդկային միտքն է, մարդկային իմաստասիրութիւնը, առանց աստ-

ուածային յայտնութեան տուեալներու, եւ մանաւանդ թէ բանը՝ զուտ բանապաշտական ձեւով մը հասկցուած: Եղիա որ դրական իմաստասիրութեան հետեւող մըն է, եւ իւրացուցած յեղաշրջականներու գաղափարները՝ որ Տարուինէն կու գան, կը գրէ.

Գըրիչ ի ձեռս, ըզբան կոչեմ, հըղօր դիմն.
Լուսաւորէ՛ նա մինչեւ իսկ ըզգամբան:
«Տուն տուր» ասեմ «պարտիմ գըրել առ հայր ոք,
Զոյր դեռահաս որդին խըլեց անողօք
Մահն: Անբարբառ կայր Բանն. արդեօք մեռա՞ծ էր.

Աղբյուրներ, աղբյուրներ, հայեր
Առ Բանն. և նա բարբառեցաւ. «Ես էի
ի սկզբնէն (Սուրբ Գիրքն ասէ զայն արդէն) .
Տեսի զայն ես ի սկզբնէն թէ, մարդէն
Բան մը չըկայ, որ պատկանի ոչ Նիւթին .
Լոյսն՝ որ զանկէն մէջ կայ զերդ բոյրն ի յԱղին,
Վառվառ ալիւրից դոյնն՝ աւօտին ցոլացում,
Լանջքն ըսպիտակ՝ քաղցր անըրջոց մարմնացում,
Ձայնն և արտօսը՝ որոնք քարերն իսկ կը շարժեն,
Եւ սեւ աչք հուր՝ որ տիեզերքն իսկ արժեն,
Այո՛, Նիւթին նոքա համայն պատկանին .
Նոյն օրինաց ներքեւ համայնք անկանին...»
« — Բայց սէրն անհաս, անասելին, ո՛հ այն սէր .
Անոր աղբիւրն, անոր բոյրն ո՛վ է տեսեր...»
— Արդարեւ, ա՛յդ մեծագոյն բառն է յաւէտ .
Ի տիեզերս ամէն ինչ է սիրաւէտ .
Քար, վարդ ու մարդ այնո՛ւ կեան ու զարդանան .
Ալեւակ, սոխակ եւ պատանեակ, Սէ՛ր՝ զարնան՝
Սէ՛ր, սէ՛ր ձայնեն. Այլ է սիրոյն արդիւնք՝ նիւթ .
Ծառին մէջ հոյզ, մարդոյն մէջ հիւթ հըրանիւթ,
Նիւթ է հանուր, նիւթ է յաւէտ սէրն. և չիք
ինչ արտաքոյ նիւթոյն» — «Նիւթ, սէր, մի՛ կորչիք»
«Ո՛չ, չիք կորուստ. չիք յաւելում ոչ հանում .
Համայն յաւէտ էր եւ լիցի... Բայց ես ո՛ւմ
Խօսիմ. ահա ներհէ. լայտից իւր վըրայ
Աղի կաթիլ մը փայլելի, թըրթըռո՛յ...»

Հոս զինքը զբաղեցնողը զլիսաւորապէս
սիրոյ հարցին լուծումն է. ինչպէս ամէն
ազնուական զլացում մեր մէջ՝ վիշտը,
լացը, ծիծաղը, սէրն ալ նմանապէս նիւ-
թին կը կապէ, համաձայն այն իմաստա-
սիրութեան՝ որուն կը հետեւի անդիտակ-
ցաբար: Նիւթը կամ մարմինը զնել աղ-
բիւր հողեկան արտայայտութիւններուն,
բացարձակապէս ժխտել է հողին դոյու-
թիւնը, կամ նոյնացնել մը անոր էութիւնը
նիւթին հետ: Սէր զնել անշուշտ իրերու
մէջ ալ, ինչպէս քարի, սիրոյ գաղափարին
անճիշտ ըմբռնում մը ցոյց կու տայ իր
մէջ, եթէ այդ բացատրութիւնը ընդհա-

նուր քերթողական իմաստով մը չառնուի,
որպէս ստեղծող զերադոյն էակին սիրոյ
արտայայտութիւնը, ըսուած ամէն ինչի՝
որ տիեզերքը կը լիցնէ: Հողեկան սէրը
յետոյ ի՞նչպէս նիւթին հետ նոյնացնել,
երբ էապէս անկախ է մարմնէն: Պատճառը
մեր բոլոր հողեկան արտայայտութիւնե-
րուն կամ երեւոյթներուն, որոնք մարմ-
նոյն միջոցաւ կը յայտնուին՝ հողին է,
զերազանց սկզբունքը՝ որմէ կը կառա-
վարուին եւ կը շարժին եւ կը կենսունակ-
ուին: Ու երբ այլեւս մարմինը ըլլայ ան-
կարող արտայայտելու այդ բոլորը, ամբ-
կարացումով, քայքայումով կենդանական

զործարաններու, հողին կը դադրի գոր-
ծելէ մարմնոյն հետ միացած եւ հաղոր-
դակից: Մահէն վերջ, հողին ձերբադատ-
ուած մարմնոյն կապանքներէն, կը սլանայ
հողիներու աշխարհը, ու իր գործունէու-
թիւնն ալ կը կեդրոնանայ մի միայն իմա-
ցական կարողութիւններուն մէջ: Բայց
Եղիա արդեօք կամաւոր անտեսո՞ւմ մը
ունի այս հողեպաշտ փիլիսոփայութեան
հիմնական տուեալներուն, թէ կը փոր-
ձէ առանց խոր համոզումի՝ զարուն ի-
մաստասիրական հոսանքը ընդհանրացնե-
լու, զիտական երեւոյթ տալու իր գաղա-
փարներուն: Կը կարծեմ թէ այս վերջին
տեսակէտն ըլլալու է իր շարժառիթը:

Իսկութեամբ նոյն ըլլալով հանգերձ
այս հատուածին մէջ աւանդուած իմաս-
տասիրական վարդապետութիւնը՝ նկատ-
մամբ նիւթին, կայ սակայն կէտ մը, որ
աւելի շեշտուած է. այն է՝ միւսիմ յաւի-

տեմականութիւնը: «Ձիք յաւելում ոչ հա-
նում» եւ կամ «Համայն յաւէտ էր եւ լի-
ցի» բացատրութիւնները յայտնապէս կը
խօսին տիեզերական եւ յաւիտենական
նիւթին մասին, որ իբր թէ իր ձեւափո-
խութիւններով կը նորոգուի միշտ:

Համառօտիւ նկատենք նաեւ իր կարգ
մը ուրիշ բանաստեղծութիւնները, որոնց
մէջ կը յայտնուի զերթէ միեւնոյն միտ-
քը: Ծեր տիտղոսուած երգը (Երկրա-
գունտ. 1887, 250) գրուած 1886-ի Փե-
տրուարին, միեւնոյն չըջանի տպաւորու-
թիւններու արդիւնք է: Հոս ալ Եղիա կը
տառապի մարդկային կեանքի վերլուծու-
մով. քարի կտոր մը, հողի պատառ մը
կ'առաջնորդեն զինքը խորհրդածութիւն-
ներու, որոնց ծայրը ժխտումն է ամէն
ինչի, եւ ոչինչ տխուր զգայնութիւննե-
րուն սարսուռը կը ցնցէ անոր միտքը:

Ի՞նչ է քարն այն: Ո՞սկը, արի՞ւն, շո՞ղ, բո՞յս, փոշի՞ .

Կըմա՛խ թռչնոյ, կուսի՞ ձեռք, դա՞նկ մարդոյ մեծ .

Շո՛ւնչ Անեղին, բո՞ց հրեղինաց, գոլորչի՞ .

Ծեր աշխարհին ի նմա լըսուի խորին հեծ:

Նոյն, հին աշխարհը, հին նիւթը՝ որ
նորին մէջ կը յայտնուի միայն ձեւերու
փոփոխութեամբ, հողեկանը խառնուած
նիւթականին. ահա ինչ որ կը տալնապե-
ցնէ Եղիան: Այս ծեր աշխարհը յեղա-
շրջումով մը նորոգուած նոր երեւոյթնե-
րու տակ, միշտ համայն նիւթին ալա-
կերպ վերկենցաղումն է:

Թոմմաս Թերզեան իր աշակերտին հո-
գեկան այս անձկութիւնը փարատելու եւ
հողէն ու նիւթէն անոր աչքերը դէպի հո-
գիի գեղեցկութիւնը առաջնորդելու հա-
մար քերթուածի մը մէջ (Առ ազնիւ եւ
սիրելի Ե. Էֆէնտի Տէմիրճիպաշեան, Գր.
եւ Իմաստ. Շարժ. 1887, 49-52) կ'աղա-
ղակէ անոր երեսն ի վեր:

« Ինչո՞ւ նայումա՞ք անձկոտ ի հող խոնարհես

Ո՛վ դու զոյր աչս երկնահայեաց հաստեց Տէր .

Քեզ ի՞նչ հրապոյր կ'ընծայեն խորք անդունդոց

Որ զլիկոր հոն նայելով կաս յեղեր: »

«Դու աստեղի կեանքն» ... կը պոռայ . մտասեւեռումին մէջ՝ քերթուածով մը կը
հողեպաշտ բանաստեղծը եւ կը ցանկայ . պատասխանէ իր ուսուցչին, կարծես հեղ-
վերադարձնել զինքը հողեկան լոյսի աշ-
խարհին: Բայց Եղիա անտեղիտալի իր
կրէ Փռչի խորագիրը (Մասիս. չաբաթա-

թերթ. 1887. թ. 3868): «Հ. Գ. Բ. Մատենաշար»-ին հրատարակութեան մէջ կը պակսի այս բանաստեղծութիւնն ալ: Փոշի է ամէն ինչ Եղիայի համար, փոշի՝ բարձրացած մարդկային կրօնկներէն, կառքերէն ստեղծուած, հովէն բերուած ու տարուած մոռյլ ամպածեւ հեղեղները, հպումներէ դոյացած, նոյնիսկ անտես, նուրբ այն փոշին, որով տիեզերքը լեց-

ուած է: Կեանքը, շարժումը, բանաւոր եւ անբան էակներու, եւ առ հասարակ ամէն էակէ մնացած այն ինչը, որ յետին հիւլէն է կամ դոյութեան փոշիացումը: Ամէն բան հուսկ փոշի է:

Սնկահոտ աղօթալայրերու, մարմարաշէն հսկայ կառուցումներու, հրաշակերտներու դիմաց, այրուղներ մարդկային հանճարին ու ձեռքին, կ'աղաղակէ Եղիա.

Զրնչ են դոքա. — Նիւթ: Եւ լիցին զրնչ. — Փոշի:
Ծիածանին դոյներն ամէն եւ երանդը,
Բոլոր մարմինք, բոլոր թեւեր, լանջք կուսի,
Ի միակ դոյն, ի միակ նիւթ տրտմատես
Վերածեսցին — Ի դոյն մոխրոյ, ի փոշի՜ . . . :

Այս երկար քերթուածը զոր ամբողջապէս մէջ բերել անկարելի է, կը դառնայ արդէն իսկ ըսուած եւ կրկնուած դաղափարներուն շուրջ: Դ. մասին վերջին տունն է հոս յիշատակուածը եւ է եղբայրացութիւնը իր բոլոր խորհրդածութիւններուն, իր դպացումներուն: Վերջին մասը (Ե.ը) ուղղուած թերղեանին, խոստովանութիւն մըն է իր հոգեկան ահաւոր անկումին, որով կորսնցուցած է այն աղնուական ու վերասլացիկ զաղափարականը հոգեպաշտութեան, զոր այնքան ջերմօրէն տողորել ուղած էր մեծ Ուսուցիչը իր աշակերտին հոգիէն ներս: Կը խոստովանի թէ իսլամ պատանիին (Պէշիր Ֆուատ պէյին՝ որուն մահուան նուիր-

ուած էր Եղիայի քերթուածը, եւ որուն ի պատասխան դրած էր իրենը Թ. Թերղեան) եւ իր հոգեկան ու մտային աստիճանը նոյն է. համանման մտածումը նիւթին վարդապետութեան նկատմամբ՝ կը միացնէ զիրենք, թէեւ ինքը չէր գինիի եւ կնոջ դերի մը, ինչպէս Ֆուատ: Ու որպէսզի խեղճ Ուսուցիչը ընդունայն ճիշդութեամբ չվերգովէ անդորրութիւնը իր հոգեպաշտ մտքին, վերջին տան մէջ քերթուածին, կը թելադրէ որ հրաժարի ուղղութեան բերելէ զինքը, քանի որ շեղումը այլեւս ճակատադրականօրէն չեղտուած է, եւ վերադարձի յոյսը գէպի Ուսուցչին դաղափարականը՝ անկարելի:

Ըզտեսլական, զորմէ, վարպետ պաշտեցեալ,
Ի վրսեմ դասս ինձ խօսէիր էր երբեմն,
Ըզտեսլական ոչ գլտանել յուսամ ալ.
Կամ մանաւանդ կորուսի դայն, վահ, անդարձ . . . :

Նշական երգ մ'ունի Եղիա այս շրջանիս փ. դարն (Արեւելք. 1892. թ. 2400, 25 Յունուար) խորագրով եւ նուիրուած առ Հ. Ղեւոնդ Ալիշան: Հոն պատմութիւնը կ'ընէ իր հոգեւոյն կործանման եւ իր «Հա-

ւատքի» կորուստին, ձեւով մը որ միամիտ է բայց միանգամայն նշանակալից: Այդ քերթուածը անձանոթ ըլլալուն համար՝ կը յուսանք հաճոյք պատճառել տալով դայն հոս:

Օր մը, եղբորս որրանին ետեւ,
Կանգնած էի՝ մանուկ դեռ՝ ոտիւք թեթեւ.
Իր թարթիչներուն ետեւէն երկա՛յն
Նայեցաւ մանկիկն ինձ՝ իր ետեւ,
Ծակոտկէն նայուածք մը յողնաջան.
Մայրս ինձ թաթն երկընցուց թեթեւ,
Եւ ահա դըտայ զիս իր ծնդաց վըրան:

« Նայէ՛, տղա՛ս. աղբարիկիդ հիմա՛յ
Նայէ՛ աչքով, աչքիդ բոլո՛ր սեւերով.
Տե՛ս բիբերն ի՛նչպէս ամբողջ են հիմայ,
Ի՛նչ պայծառ անոնք կը յայտնեն դորով.
Աչքն՝ ետին նայելով՝ ծուռ կը մընայ.
Նայէ հիմայ աչքիդ բոլո՛ր սեւերով
Պօղոսիկին, տղա՛ս, որ գթեղ կանչէ թեւերով: »

Օր մը, Կրօնքն՝ հոգւոյն մայր, մըխիթար,
Որրանիս մօտ իւր կաթն աննիւթ ինձ ջամբէր.
Որրանին ետեւ կանգնեցաւ հսկա՛յ այն Դար...
Աչքս յանըզայս իրեն էր դարձեր.
Շատ ջանաց մայրս որ նա հեռ՛ու հեռու երթար,
Կամ դար՝ ուրացող Դարն՝ իւր գիրկը նետուէր.
Նայելով ետին՝ մըտաց աչքն որդւոյն պիտի ծըռէ՛ր...:

Ահեղ Դարն յամառեցաւ կեցաւ.
Աչքս յառեցաւ ու բեւեռեցաւ
Որրանիս ետեւ կեցող էակի՛ն.
Ըստինք չունէր, կամ թէ ցամաք՝ ծիծն իւր անբա՛ւ.
Շուրթքս երկընցուցի իմ մօրս ստինքին.
Իր տեղ ... տարտամ նըշոյլ մ'ի՛նձ երեւցաւ,
Որ այն ալ ահա կը ցնդէր. — Ու լացի ետեւէն Հաւատքին...:

Մանկութեան յուշեր, ընտանեկան շրջանակ՝ դադափարային նոր ծնունդի մը պատմութիւնը ընելու համար: Եղիա երկու պատկեր կը դծէ, բայց նպատակը մէկ է: Առաջինին մէջ (երկու սկիզբի տուները) կը նկարագրէ թէ ի՛նչպէս ինքը օր մը եղբորը որրանին ետեւ կեցած՝ կը ստիպէր փոքրիկ եղբորը ետին նայիլ, ու մայրը վախճալով որ աչքը ծուռ մնայ փոքրիկին՝ կ'առնէ զինքն ալ իր գիրկը ու զէմ գիմաց կը նստեցնէ երկու փոքրերը: Երկրորդը (վերջին երկու տուները) չափա-

հաս Եղիային հոգեկան ծնունդը կը դծէ. կրօնական դաստիարակութեան հետ՝ որ անպակաս եղած է իրեն, օր մը դարուն իմաստասիրութիւնը կը հմայէ անոր աչքը՝ կանգնած իր որրանին (այսինքն իր կրօնական լուրջ եւ ուղիղ դաստիարակութեան կողքին): Եղիայի աչքը, ուշադրութիւնը, հետաքրքրութիւնը անգիտակցաբար եւ առանց անդրադառնալու կը դըրաւունին այդ Դարէն, այդ իմաստասիրական դրութեան, որ Լիթրէինն է կամ Սփէնսերին...: Կրօնքը, իր հոգեւոր մայ-



ըր, կը պայքարի որ ուրացող Դարը, փոխանակ որոնքին ետեւ կանգնելու՝ դայ դիմացը, այսինքն փոխանակ անուղղակի հրապուրելու՝ թող դիմացէն պայքարի ու մայրը յաղթահարէ դայն կամ հեռացնէ վտանգը իր հողեւոր զաւակէն... Դարը սակայն չի հպատակիր մօրը թախանձանքին. կը յամառի իր դիրքին վրայ: Ու Եղիա կ'ըլլայ զոհը այդ հրապուրիչին, եւ աչքը կը ծռի, հայեացքը կը կորսնցնէ իր ուղիղ տեսութիւնը, կը յառի այդ իմաստասիրութեան, կը վրիպի միտքը, կը մոլորի: Քերթողը կը կորսնցնէ այսպէս հաւատքը: Վերջին տողը «Ու լացի ետեւէն Հաւատքի», կ'ամբողջացնէ միտքը քերթուածին եւ կը փակէ դայն ձեռով մը՝ որ ճնշիչ տպաւորութիւն կը թողու, ճշուժ եւ լքում իջած տառապեալ Եղիայի հոգւոյն վրայ:

Բանաստեղծութիւններուն մէջ յայտնապէս կրկնուած նիւթի այս վարդապետութիւնը բացորոշ արտայայտութիւններ կ'առնէ իր արձակ էջերուն մէջ ալ: Մենք այս հարցին շուրջ պիտի վերադառնանք երբ քննութեան առնենք Եղիայի իմաստասիրական բնոյթ ունեցող գրութիւնները: Սակայն ի լրացումն ցարդ ըստաճներուն, յատկապէս բացատրութիւններ փնտռողներու իբրեւ գոհացում՝ կը մէջընկերէ հոս իր արձակներէն միայն սա քանի մը կարեւոր տողերը, զոր նա Հրահանգիչ Խօսակցութիւնի կտորին մէջ (Գր. եւ իմաստ. Շարժ. 1886. 117-123) կու տայ՝ փոսելով միջոցի, ժամանակի եւ նիւթի վրայ: Իր ըմբռնումը ժողովրդականացնելու յայտնի նպատակը իսկոյն կը հասկցուի: Հոն Ատոմը ինքն է, իսկ Համբարձումը տգէտ ժողովուրդի ներկայացուցիչ մը: Թմբիկի ճիւղ մը՝ զոր Համբարձում կը նըւրիւնէ Ատոմին, ծայր կու տայ փոսակցութեան, որ կ'երթայ կը յանգի հոսեւ նիւթին, յեղաշրջումին, ու տիեզերքի կազմութեան:

«Նիւթէն կազմուած է, կ'ըսէ Ատոմ, տիեզերքը: Նիւթը յաւիտեանակամ է: Ոչինչը ոչնչէն չի ստեղծուիր, եւ ոչինչը չ'ոչնչանար բնութեան մէջ: Կը կերպարանափոխուի միայն նիւթը՝ այն գորութեամբ որ իրեն յատուկ է»: Թմբիկի ճիւղին այլուժը՝ ոչնչացումը չէ ատոր, այլ ենթարկուել մը ձեւի փոփոխութեան. ծուխի եւ ածխի փոփոխում մը միայն, նիւթը մընալով միշտ նիւթ. վասնզի ծուխն ու ածխն ալ նիւթ են, ոչինչ չեն: «Այդ ծուխին եւ այդ ածխին մէջ, կը շարունակէ Ատոմ, նոյնքան բան կայ՝ որքան կարծանքի փայտին կազմակամ մասունքին՝ այլու ժամանակ օդէն ալ նիւթեր առին. հետեւաբար այդ ծուխն ու փայտին եթէ կշռուին՝ աւելի ծանր պիտի գան այն ուստէն գործնական բան մը էր...: Այսպէս տարբեր՝ նիւթին յատուկ գորութեամբ մը կը փոխուին անընդհատ, իրենց գանգուածը եւ իրենց ներքին նկարագիրը անփոփոխ մնալով յաւիտեան: Նիւթը ոչ կը ստեղծուի, ոչ կը ջնջուի, ոչ կը նուազի, ոչ կ'առաւելու, ոչ կը քեթեւնայ, ոչ կը ծանրանայ. կը կերպարանափոխուի միայն. այսինքն տեղ կը փոխէ, ձեւ կը փոխէ, վիճակ կը փոխէ»:

Դիմոկրիտէս իմաստասէրի եւ Լուկրեւտիոս բանաստեղծին միտքն է որ հոս կը կրկնուի, դարուն նիւթապաշտ իմաստասիրութեան եւ նոր դարերու բնագիտական պրպտումներու եւ սկզբունքներու ծանօթ բանաձեւումներուն հետ: Բնագիտական կարգին մէջ ընդունելի է նիւթէն նիւթ փոխանցումը, յեղաշրջումը բնական օրէնքներու բացատրութեամբ. սակայն երբ Եղիա հոգեկան գորութիւնները, հոգին իսկ կը վերածէ նիւթին, եւ նիւթական ու բնագիտական օրէնքներով կը բացատրէ, կարելի է ըսել թէ դարձած է բոլորովին նիւթին եւ ուրացած ստեղծագոր-

ծութիւնը, հոգեկան աշխարհներու անժխտելի գոյութիւնը, Գերագոյն՝ Էսկի անջատ, անշփոթելի անձնականութիւնը:

* * *

Իր ներաշխարհին ահաւոր տրամութիւններէն ծնած այն երգերը, որոնց մէջ նիւթին վարդապետութիւնը աւանդած էր, յայտնի հակասութիւն մը կը կազմեն այն երգերուն՝ որոնց մէջ մերթ երկչոտ եւ երկիւղած, մերթ բողոքի շնչով մը կը կատարէ նիւթէն վեր ելլելու ճիւղեր: Նկատմամբ Աստուծոյ գոյութեան՝ Եղիայի միտքը անորոշ է: Ան կը յարի երբեմն յաւիտեանական նիւթին վարդապետութեան, հոգեղէն կեանքի արտայայտութիւններն ալ վերածելով անոր, եւ երբեմն կ'ընդունի զԱստուծոյ՝ որ յեղաշրջողն է նիւթին տիեզերքի ընդհանուր կազմածին մէջ: Կը մնայ արտաքին հետեւաբար թէ արդեօք նիւթը «ի յաւիտենից»

ստեղծեալ էա՞կ, թէ անստեղծ եւ բացարձակ էակ մ'է: Ամէն պարագային՝ իր վարդապետութիւնը հասկնալու է դրապաշտ իմաստասիրութեան սահմանին մէջ: Ինչպէս ըսինք, Եղիա կ'աւելնի տառամասութիւններու մէջ: Կը հաւատայ Աստուծոյ՝ ապացոյց՝ իր Հայր մերը (Գրական եւ իմաստասիրական Շարժում, 1884. 181-182) ուր պաղատանքի, աղօթքի հոգեկան պէտքը կը զգայ եւ կ'երգէ, ուղղուած Գերագոյն էակին. կը հաւատայ Յիսուսի գերմարդկային բնութեան, մարդկութեան փրկչին տառապանքներուն կը մօտենայ քրիստոնէական զգացումով եւ յուզումով, խոնարհ, հլու, համակամ Առ Յիսուս բանաստեղծութեան մէջ (Երկրագունտ. 1886. 68), ուր Եղիա բնականոն է իր արտայայտութեամբը եւ աստուածաբան իր բացատրութիւններուն մէջ, ինչպէս կը յայտնեն սա հետեւեալ տողերը.

Եւ ես աչօք արտասուելից - հէգ պըւէտ -
Ըզբեղ դիտեմ, Յիսուս, Աստուածդ իմ՝ Եղբայր.
Լրսեմ հեծիւնդ, ոչ եւս ըզբանդ երկնաւէտ.
Բանք երկնամարտ, նոքա լընուն ըզմեր դար:

Նոյն քերթուածին մէջ կ'ըսէ նաեւ որ թողած է այլեւս մանկութեան հաւատքը.

Ունկանս հնչեն բառք «Քրիստոսի հետեւող»,
Զորս ուսուցին ինձ ի մատաղ մանկութեան.
Ոչ հետեւեմ քեզ յաւէտ Տէ'ր. - ո՛հ, ինձ թո'ղ. -
Եւ սակայն աչքս հետեւին քեզ յաւիտեան:

Երկինք քերթուածը (Թէոքիկ, Ամէնուն Տարեցոյց, 1923, 98) զմայլանքի երգ բանաստեղծի մը՝ որ բնութեան տարրերուն եւ երկնի կապոյտին ու խաղերուն առջեւ կը յուզուի եւ կը խորհրդածէ. երկինքը Բարձրելոյն դահլը, անհուն լոյսի շտեմարանն է: Այդ քերթուածին մէջ անաստուածի, անկրօնի, նիւթապաշտի ոչ մէկ բացատրութիւն կը գտնուի:

Կրօնական շնչով մ'ունի Առ Միմա Չե-

բազ քերթուածը, ուր նկարագրելէ վերջ հիւանդ բարեկամին տառապանքը հիւանդանոցի մը անկիւնը, կը զիմէ մայրապետ կուսաններու, յանձնարարելով աղօթել անոր հոգւոյն համար... որմէ կարելի է եզրակացնել թէ քրիստոնէական ըմբռնումէն չի շեղիր եւ մարմնին առողջութենէն աւելի կը մտահոգուի հոգւոյն փրկութեան հարցով:

Ծովը հնչեալին մէջ «Հոգւոյ իմոյ ան-

նիւթ եւ անմահ» քաջատրութիւնը հակա-
սութիւն մը չէ՞ ամէն ինչ նիւթի վերածող
Եղիայի համար:

Անհաւատ մը, բողոքող մըն է թէեւ իր
Աղօթք տիտղոսութեամբ (Թէոքրիկ. Ամէնուն
Տարեց. 1915. 240) երգին վերջին տան
մէջ, բայց «Մեղայ»-ով մը զղջական ար-
տայայտութիւն կու տայ իր յանդուդն
մտածութեան.

Այլ... խի'ց ականջդ, ո'ւ չընտակ...

Ոսկե'րք եւ ոսկերք... Ո'ւ Եղեկիէլ...:
Երբ կեանքն ի կրմախ հանուր վերածուի,
Բարձրելոյն ի փոս ձայն պիտի հասնի.
« Հասած է մեծ օրն, ե'լ, կանգնէ', մեռել' »:

Հրամանաց վերին ընդդէմ մի մեռել
Պիտի անսաստէ': Փայտ իր փակ ճաղի
Յրցուումն երկնից դէմ ահե'ղ տի կանգնի:
Յարութեան ընդդէմ յաւիտեան մեռել:

Փափուկ ըզգացմամբք սիրտ մը յար զեղուն,
Հանճար երկնաթռիչ իբր արծուի թռչուն,
Հըրատենչ մարմին թրթռուն իբրու քնար,

Ձայն ապրեցընես փակ ի խուց փրտուն,
Կեանքն ողջոյն, Աստուած, հայր անապոյտ:
Հոտած դադաղս, արդ, քեզ յաւատ բուրվառ:

Յանդուդն չեշտ կայ այս քերթուածին
մէջ, դայրացած հոգի մը, դառն ու կըր-
քոտ արտայայտութիւն մը, որ իր վերջին
տողովը կը դառնայ նոյնիսկ հայհոյու-
թիւն: Եղիա կը պայքարի կեանքի վերա-
նորոգութեան դադափարին դէմ: Յաւի-
տեան մեռել մը ինքը լուսաւոր եւ նորոգ-
ուած մարմիններու երամին մէջ, եւ ին-
չո՞ւ: Եղիա իսկ չի գիտեր թէ ինչո՞ւ կը
ցանկայ այսպէս: Տփուհ, յուսահատ,
լքուած, յաւատ տառապած բանաստեղծն է
ինքը, որ չունի հանգիստ՝ բայց եթէ անէ-
ութեան մէջ: Յարութիւնը վերադարձ մըն
է դէպի կեանքը, անշուշտ ոչ մարմնակա-
նը. սակայն Եղիա յարութեան դադափա-
րին մէջ տեսնելով ցաւին վերսկսումը, կը

Ես ըսեմ, դուն ո'չ մի' լսեր.
Երկինքն յաւատ դըտայ դատարկ...
Ունայն Աստուած, եւ ունայն սէր...
Մեղա'յ Տէր:

Ըմբատ յարութիւն (կամ Բուրվառ -
Դագաղս. Թէոքրիկ. Ամէնուն Տարեցոյցը.
1913. 16) ուրիշ երգ մըն է, ուր բանա-
ստեղծը կ'ըմբոստանայ մեռելներու յա-
րութեան դադափարին դէմ.

(9)

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ

Լ Ո Ւ Ի Փ Ա Ս Տ Է Օ Ռ

(1822 - 1895)

ԻՐ ԿԵԱՆՔԸ ՈՒ ԳՈՐԾԸ

(Շար. Բազմ. 1954, թիւ 11-12, էջ 272)

Փաստէօնի հանճարը տակաւին ուրիշ
բարիքներ եւս պիտի սփռէր մեզի օգտա-
կար շարք մը կենդանիներու ընտանիքին
մէջ: Հաւերը, խողերը եւ շուններն ալ պի-
տի օգտուէին անկէ:

Հաւերն ալ ենթակայ են մահացու հի-
ւանդութեան մը, որ հաւերու ֆոլեռայ կը
կոչուի:

Երբ այս հիւանդութիւնը բոյն դնէ հաւ-
նոցներու մէջ, անոնց բնակչութեան 90%
տոկոսը կը վարակուի ու կը մեռնի:

Հիւանդ հաւը իր կայտառութիւնը կը
կորսնցնէ, այլեւս ոչ կը քալէ եւ ոչ ալ իր
չըջապատովը կը հետաքրքրուի, ինքնիր
վրայ կծկուելով՝ փետուրները կը ցցէ,
գլուխը կը կախէ, աչքերը կը դոցէ ու խոր
թմբիւրի մը մէջ կը թաղուի, որուն կը յա-
ջորդէ մահը: Փաստէօն այս հիւանդու-
թիւնն ալ ուսումնասիրելով, կը յաջողէր
հիւանդ հաւերու արեան մէջ գտնել ախ-
տածին մանրէն, որուն միջոցով փրկարար
պատուաստն ալ կը պատրաստէր:

Խողերն ալ ունէին իրենց մահացու հի-
ւանդութիւնը՝ ռուժէ կոչուածը. Փաս-
տէօն՝ անասնաբոյժի մը խնդրանքներուն
հետեւանք տալով, այս հիւանդութեան ալ
մանրէն ու պատուաստը կը գտնէր:

Փաստէօնի գիւտերը այնքան լայն հո-
րիզոններ բացած էին, որ այլեւս զմայլելի
ներդաշնակութեամբ մը նորոյթները մէ-
կը միւսին կը յաջորդէին:

Մանրէներու գոյութիւնը քողագերծ-
ուելէ ետք, ամէնէն աւելի բժշկութիւնը
ներշնչուել սկսաւ Փաստէօնի գիւտերէն:

Նախ քան Փաստէօն, մայրանոցներն ու
հիւանդանոցները, օգտակար հաստատու-
թիւններ ըլլալէ աւելի, կատարեալ սպան-
դանոցներ էին. հոն ապաստանողներէն
չատ քիչերուն վիճակուած էր ողջ առողջ
դուրս ելլել: Պարզապէս թարախի եւ փը-
տութեան մահացու որջեր էին, որոնք հա-
րիւր հազարաւոր մարդերու կեանքը կը
խլէին:

Մասնաւորապէս պատերազմներու ըն-
թացքին, հէզ վիրաւորները ճանճերու պէս
կը մեռնէին, այն աստիճանի՝ որ պատե-
րազմներու դաշտէն աւելի հիւանդանոցնե-
րու փտութիւնն էր որ կը փճացնէր բա-
նակներու զինուորական ոյժին մեծագոյն
մասը:

Այդ դոյաւիճակին գլխաւոր պատաս-
խանատուները նոյնինքն բժիշկներն էին.
անոնք էին որ իրենց աղտոտ ձեռքերով ու
գործիքներով, առանց պահ մը իսկ տա-
րակուսելու, մահացու մանրէներ կը փո-
խադրէին ու մահուան ամենահաւատարիմ
զինակիցները կը դառնային:

Փաստէօն ահազանգը հնչեցնելով, բը-
ժիշկներն ու վիրաբոյժները իրենց թմբի-
րէն կ'արթնցնէր. անոր գիւտերովն ու ճի-
գերովն էր որ կը յայտնաբերուէր մանրէ-
ներու չարաբաստիկ գոյութիւնը. ան էր
որ կը սորվեցնէր բժիշկներուն, թէ ինչ-
պէս պէտք էին խնամել վէրք մը, թէ ինչ-
պէս վիրաբոյժը պէտք էր մաքրել իր ձեռ-
քերն ու գործիքները:

Փաստէօնով՝ նոր ու բեղնաւոր դարա-
չըջան մը կը սկսէր բժշկութեան համար,
այլեւս չնորհիւ իր վարդապետութեան՝
կարելի կը դառնար, առանց վախի, հի-
ւանդի մը փորը բանալ, անոր փորտիքը
ժամերով տակն ու վրայ ընել, ամենա-
յանդուդն գործողութիւններ կատարել:

Փաստէօնի քարոզած հակախաւկան
միջոցները կիրարկելով, կարելի կը դառ-
նար ճակատաբաց յայտարարել՝ թէ վի-
րաբոյժին ձեռքով բացուած ամենամեծ